ԴԵՊՔԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ. Մայիսի 7, միջնեւ ժամը 14

— Ադրբեջանական զանգվածային լրատվության միջոցները ի տարբերություն կենտրոնական միջոցների, մեկնաբանում են Գետաշենում եւ Մարտունաշենում, հայերի դեմ կատարվող թշնամական գործողությունները: Հեռուստատեսային ամենօրյա «Գյունուն էկրանը» հաղորդումը, օրինակ, ներկայացնում է դրանք որպես «հայ գրոհայինների վնասազերծման միջոցառումներ Ադրբեջանի Խանլարի շրջանում»: Հեռուստադիտողներին հավաստիացումներ են տրվում, որ մի քանի ուղղաթիռներով արդեն բնակչության մի մասը ուղարկվել է Երեւան եւ հաջորդ օրերին էվակուացումը կշարունակվի: Ադրբեջանի Մոսկվայի մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ փաստագրական նյութեր են ներկայացրել ադրբեջանական սահմանամերձ տարածքի Հայաստանի կողմից լայնածավալ հրետակոծությունների մասին: Մասնավորապես նշվել է մայիս 3-ին Ղազախի շրջանի հրետակոծության ժամանակ երկու զոհվածի եւ բազմաթիվ վիրավորների մասին: Ադրբեջանական խոսնակը հայտարարել է, թե 1991 թվականի սկզբից ԼՂԻՄ-ի տարածքում հայերի կողմից սպանվել է 90 ազերի եւ 50-ից ավելին վիրավորվել են: Պնդվել է, թե հենց այդ «դառը իրողությունն է» պատճառ հանդիսացել Խանլարի շրջանում ծավալված «միջոցառումների»:

— Մայիսի 6-ի տվյալներով Գետաշենից եւ Մարտունաշենից ուղղաթիռներով Ստեփանակերտ են տեղափոխվել 1120 հոգի՝ հիմնականում ծերեր, կանայք եւ երեխաներ:

Ժամանակավորապես նրանք տեղավորվել են դպրոցներում, մանկապարտեզներում, ծանոթների եւ բարեկամների տներում:

Համաձայն վերջնական տվյալների (չհաշված զոհվածներին եւ անհայտ կորածներին) Գետաշենում եւ Մարտունաշենում ապրում էին մոտ 2400 բնակիչներ, ուստի շուրջ 1280 հոգի, հիմնականում տղամարդիկ, սպասում են տեղահանման:

Մայիսի 7-ին Գետաշենի հետ կապը խափանված էր, եւ ոչ մի կերպ հնարավոր չէր իմանալ, թե ինչ է կատարվում այնտեղ:

Ըստ նախնական տվյալների, որոնք հաղորդել են վերջին ուղղաթիռով թռչողները, իրենցից հետո տանկեր են շարժվել դեպի գյուղ. մնացածը հայտնի չէ:

Մայիսի 6-ին, Ստեփանակերտից որոշ զորամիավորումներ են շարժվել դեպի Լաչին-Գորիս սահմանը, իսկ մարզի տարածքում համեմատաբար խաղաղ էր, չնայած Ստեփանակերտի փողոցներում զինվորականներն ավելի շատ են, քան բնակիչները:

Մայիսի 7-ին Ստեփանակերտից Երեւան տեղափոխվեցին 64 գետաշենցիներ՝ (երկու ինքնաթիռ). սպասվում է նաեւ 5-6 ինքնաթիռների ժամանումը:

— Ինչպես հաղորդում է «Նորություն սերվիս» տեղեկատվական գործակալությունը, Հայաստանի ՆԳՆ-ն աղբյուրների համաձայն, երեքշաբթի օրը ներքին զորքերի եւ դեսանտայինների ուժերով գրոհվել են Գորիսի շրջանի 6 գյուղեր: Կոռնիձոր, Խնածախ, Խնձորեսկ, Տեղ, Արավուզ եւ Շուռնուխ գյուղերը ենթարկվել են ուժեղ կրակահերթի: Այնտեղ տեղակայված երկրապահ ջոկատները, որոնք Հայաստանի Հանրապետության պաշտոնական համակարգի մեջ են մտնում, եւ միլիցիայի զորամիավորումները՝ այդ թվում Երեւանից, կրակին չեն պատասխանում եւ նահանջում են:

Երեքշաբթի օրը Գորիսի շրջանի Խոզնավար գյուղի վրա երեւացել են ուղղաթիռներ: Բնակիչների շրջանում իրարանցում է սկսվել:

«Նորություն սերվիս»ի տվյալների համաձայն, հարձակման հետեւանքով երկուշաբթի օրը Ոսկեպար գյուղում զոհվել են Հայաստանի ՆԳՆ-ն 12 աշխատակիցներ, ամենաքիչը 24-ը անհետացել են, մոտ 40-ը պատանդ են վերցվել: Այժմ բանակցություններ են գնում նրանց վերադարձնելու մասին:

— Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները ի տարբերություն կենտրոնական միջոցների, մեկնաբանում են Գետաշենում եւ Մարտունաշենում, հայերի դեմ կատարվող թշնամական գործողությունները: Հեռուստատեսային ամենօրյա «Գյունուն էկրանը» հաղորդումը, օրինակ, ներկայացնում է դրանք որպես «հայ գրոհայինների վնասազերծման միջոցառումներ Ադրբեջանի Խանլարի շրջանում»: Հեռուստադիտողներին հավաստիացումներ են տրվում, որ մի քանի ուղղաթիռներով արդեն բնակչության մի մասը ուղարկվել է Երեւան եւ հաջորդ օրերին էվակուացումը կշարունակվի: Ադրբեջանի Մոսկվայի մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ փաստագրական նյութեր են ներկայացրել ադրբեջանական սահմանամերձ տարածքի Հայաստանի կողմից լայնածավալ հրետակոծությունների մասին: Մասնավորապես նշվել է մայիս 3-ին Ղազախի շրջանի հրետակոծության ժամանակ երկու զոհվածի եւ բազմաթիվ վիրավորների մասին: Ադրբեջանական խոսնակը հայտարարել է, թե 1991 թվականի սկզբից ԼՂԻՄ-ի տարածքում հայերի կողմից սպանվել է 90 ազերի եւ 50-ից ավելին վիրավորվել են: Պնդվել է, թե հենց այդ «դառը իրողությունն է» պատճառ հանդիսացել Խանլարի շրջանում ծավալված «միջոցառումների»:

— Մայիսի 6-ի տվյալներով Գետաշենից եւ Մարտունաշենից ուղղաթիռներով Ստեփանակերտ են տեղափոխվել 1120 հոգի՝ հիմնականում ծերեր, կանայք եւ երեխաներ:

Ժամանակավորապես նրանք տեղավորվել են դպրոցներում, մանկապարտեզներում, ծանոթների եւ բարեկամների տներում:

Համաձայն վերջնական տվյալների (չհաշված զոհվածներին եւ անհայտ կորածներին) Գետաշենում եւ Մարտունաշենում ապրում էին մոտ 2400 բնակիչներ, ուստի շուրջ 1280 հոգի, հիմնականում տղամարդիկ, սպասում են տեղահանման:

Մայիսի 7-ին Գետաշենի հետ կապը խափանված էր, եւ ոչ մի կերպ հնարավոր չէր իմանալ, թե ինչ է կատարվում այնտեղ:

Ըստ նախնական տվյալների, որոնք հաղորդել են վերջին ուղղաթիռով թռչողները, իրենցից հետո տանկեր են շարժվել դեպի գյուղ. մնացածը հայտնի չէ:

Մայիսի 6-ին, Ստեփանակերտից որոշ զորամիավորումներ են շարժվել դեպի Լաչին-Գորիս սահմանը, իսկ մարզի տարածքում համեմատաբար խաղաղ էր, չնայած Ստեփանակերտի փողոցներում զինվորականներն ավելի շատ են, քան բնակիչները:

Մայիսի 7-ին Ստեփանակերտից Երեւան տեղափոխվեցին 64 գետաշենցիներ՝ (երկու ինքնաթիռ). սպասվում է նաեւ 5-6 ինքնաթիռների ժամանումը:

— Ինչպես հաղորդում է «Նորություն սերվիս» տեղեկատվական գործակալությունը, Հայաստանի ՆԳՆ-ն աղբյուրների համաձայն, երեքշաբթի օրը ներքին զորքերի եւ դեսանտայինների ուժերով գրոհվել են Գորիսի շրջանի 6 գյուղեր: Կոռնիձոր, Խնածախ, Խնձորեսկ, Տեղ, Արավուզ եւ Շուռնուխ գյուղերը ենթարկվել են ուժեղ կրակահերթի: Այնտեղ տեղակայված երկրապահ ջոկատները, որոնք Հայաստանի Հանրապետության պաշտոնական համակարգի մեջ են մտնում, եւ միլիցիայի զորամիավորումները՝ այդ թվում Երեւանից, կրակին չեն պատասխանում եւ նահանջում են:

Երեքշաբթի օրը Գորիսի շրջանի Խոզնավար գյուղի վրա երեւացել են ուղղաթիռներ: Բնակիչների շրջանում իրարանցում է սկսվել:

«Նորություն սերվիս»ի տվյալների համաձայն, հարձակման հետեւանքով երկուշաբթի օրը Ոսկեպար գյուղում զոհվել են Հայաստանի ՆԳՆ-ն 12 աշխատակիցներ, ամենաքիչը 24-ը անհետացել են, մոտ 40-ը պատանդ են վերցվել: Այժմ բանակցություններ են գնում նրանց վերադարձնելու մասին:

Սեփ. թղթակիցներ